ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« »_____ 2024թ **N--------- -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***Երևան քաղաքի ավագանին որոշում է.***

1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» N 405-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի 12-րդ ենթակետի՝

1) «ա» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ա. համայնքի ղեկավարի համաձայնեցմանը ներկայացվող հետագիծ-նախագծի հետ որպես անբաժանելի մաս կազմել աշխատանքների իրականացման տարածքի կահավորման սխեման, որն իր մեջ ներառում է հետևյալ պարտադիր տարրերը՝ աշխատանքների իրականացման ողջ տարածքում՝ հանդիպակաց դասավորությամբ տեղադրված տակդիրով և կանգնակով ցուցատախտակի միջոցով՝ տեսանելի վայրերում ապահովել կատարվող աշխատանքների իրազեկումը (մատակարար և կապալառու կազմակերպությունների տվյալների նշումով, այդ

թվում՝ տարբերանշան, հասցե, հեռախոսահամար, աշխատանքների անվանումը և նպատակը, կատարման ժամկետի սկիզբը և ավարտը), քանդվող տարածքի բոլոր կողմերի երկայնքով ստեղծել արգելափակող գոտի՝ օգտագործելով մետաղական ճաղավանդակներից պատրաստված առնվազն 1.5 մետր բարձրությամբ ժամանակավոր պատնեշներ, դրանց վրա տեղադրելով համապատասխան լուսանդրադարձիչ նյութեր կամ լուսատու սարքեր՝ գիշերային և մութ ժամերին երթևեկության ու հետիոտնի տեղաշարժի անհրաժեշտ անվտանգությունն ապահովելու համար: Սույն պարբերությամբ նախատեսված կահավորումն անհրաժեշտ է պահպանել մինչև տարածքը նախկին տեսքի բերելու աշխատանքների ավարտը,».

2) «ը» պարբերությունում նախավերջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Այնուհետև, կտրվածքի ամբողջ պարագծով իրականացնել բիտումապոլիմերային մաստիկի տեղադրում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆ

ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Նախագծի նպատակն է ավելի անվտանգ և տեսանելի դարձնել փողոցի երթևեկելի հատվածը քանդման և վերականգնման աշխատանքների ժամանակ: Ներկայումս աշխատանքների իրականացման տարածքի կահավորումն իրականացվում է մետաղական ճաղավանդակներով կամ ժապավեններով, նախագծով առաջարկվում է աշխատանքների իրականացման տարածքի կահավորումն իրականացնել բացառապես օգտագործելով մետաղական ճաղավանդակներից պատրաստված առնվազն 1.5 մետր բարձրությամբ ժամանակավոր պատնեշներ:

Նախագծով առաջարկվում է նաև փողոցների երթևեկելի հատվածներում, հրապարակներում, բակերում, աշխատանքների վերջում կտրված տարածքի պարագծով բիտումապոլիմերային մածիկով ամրացնել ասֆալտբետոնյա ծածկը, որը վերականգնում է ճանապարհների ծածկույթը, ճաքերը, անցքերը, այն դարձնում է ջրամեկուսիչ և հիդրոիզոլացված, ինչի արդյունքում էականորեն երկարում է տվյալ կտրված հատվածի օգտագործման տևողությունը և թույլ չի տալիս կտրված պարագծով նոր ճաքերի և փոսերի առաջացում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆ

ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ